ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 28

28 հունիսի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգի հաստատման մասին>> թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ղեկավարի կողմից 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի հողային հաշվեկշռին, ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների՝ համաձայն հավելվածի:

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ - ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ – ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Խ. ԲՈՒԼՈՅԱՆ – ԿՈՂՄ

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ - ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
28 հունիսի 2013 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 28 ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3720.95 հա, որից վարելահող՝ 1793.27 հա, արոտ՝ 1796.45 հա, այլ հողեր՝ 131.23 հա
2. Բնակավայրի հողեր՝ 212.68 հա
3. Արդյունաբերություն, ընդերքի օգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 88.73 հա,
4. էներգիայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 17.03 հա,
5. հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 52.04 հա,
6. հատուկ նշանակության հողեր՝ 6.48 հա,
7. ջրային հողեր՝ 6.30 հա,

Ընդամենը՝ 4104.21 հա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 29

28 հունիսի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 4-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետի դրույթներով, ինչպես նաև <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 4-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 01.1.1.51 (ապարատի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 5121 (տրանսպորտային սարքավորումներ) հոդվածի 3000000 (երեք միլիոն) թիվը փոխարինել 0 (զրո) թվով, 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի 1320000 (մեկ միլիոն երեք հարյուր քսան հազար) թիվը փոխարինել 0 (զրո) թվով, 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածի 1870000 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) թիվը փոխարինել 2613000 (երկու միլիոն վեց հարյուր տասներեք հազար) թվով:
2. 06.1.1.51 (բնակարանային շինարարություն) գործառական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի 570000 (հինգ հարյուր յոթանասուն հազար) թիվը փոխարինել 0 (զրո) թվով:

3. 06.4.1.51 (փողոցների լուսավորում) գործառական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի 1400000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) թիվը փոխարինել 850000 (ութ հարյուր հիսուն հազար) թվով:
4. 08.1.1.51 (հանգիստ և սպորտ ֆոնդային ներդրում) գործառական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի 0 (զրո) թիվը փոխարինել 1672000 (մեկ միլիոն վեց հարյուր յոթանասուներկու հազար) թվով, 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի 0 (զրո) թիվը փոխարինել 442000 (չորս հարյուր քառասուներկու հազար) թվով:
5. 06.4.1.51 (փողոցների լուսավորում ֆոնդային ներդրում) գործառական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի 0 (զրո) թիվը փոխարինել 2083000 (երկու միլիոն ութսուներեք հազար) թվով:
6. 09.5.1.51 (արվեստի դպրոցի ֆոնդային ներդրում) գործառական դասակարգման 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածի 0 (զրո) թիվը փոխարինել 500000 (հինգ հարյուր հազար) թվով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
28 հունիսի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 30-Ն

28 հունիսի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի բնակելի կառուցապատման գոտում Հր. Շահինյան փողոցի ընդհանուր իրավասության դատարանի հարևանությամբ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-0022) 400 քառակուսի մետր հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 60%-ի չափով՝ 126720 (մեկ հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր քսան) դրամ:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
28 հունիսի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 31-Ն

29 հունիսի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի բնակելի կառուցապատման գոտում Հր. Շահինյան փողոցի ընդհանուր իրավասության դատարանի հարևանությամբ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-0022) 400 քառակուսի մետր հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
4. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 60%-ի չափով՝ 126720 (մեկ հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր քսան) դրամ:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
28 հունիսի 2013 թվական